



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում

Քաղաքական, տնտեսական, մամուլի և տեղեկատվության բաժին

Երևան, 19 մարտի 2015թ.

ԵՄ-Հայաստան՝ ձևավորում ենք ապագա համագործակցության լավատեսական օրակարգը

Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման բանակցությունների հարցերով ԵՄ հանձնակատար Յոհաննես Հաանի այցելությունը Երևան տեղի ունեցավ ա.թ մարտի 18-ին: Այցի ընթացքում ԵՄ հանձնակատարը հանդիպեց ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի և ՀՀ արտաքին գործերի նախարարի հետ ինչպես նաև քննարկումներ ունեցավ ընդդիմության ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի ուղեկցությամբ նրանք այցելեցին Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ, որը ֆինանսավորվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից Մասնագիտական կրթության և ուսուցման շրջանակներում:

Երևանում գտնվելու առիթից օգտվելով, հանձնակատար Հաանը մասնակցեց և ելույթ ունեցավ Եվրանեսթ խորհրդարանական վեհաժողովի 4-րդ լիազումար նստաշրջանին, որի ընթացքում նա կներկայացնի վերջերս քննարկման դրված Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայման հիմնական կետերը:

Հայաստանյան իր զրուցակիցների հետ քննարկումների ընթացքում հանձնակատարն ընդգծեց, որ ընթացիկ տարին կարևոր է և նշանակալի ԵՄ-Հայաստան ապագա համագործակցության համար: Այն խորհրդանշական կլինի միասնական հանձնառությամբ և համատեղ ջանքերով ԵՄ-Հայաստան հարաբերությունները հնարավոր ուղղություններով սերտացնելու և դրանց հետագա իրավական հիմքերի շուրջ բանակցություններ ծավալելու տեսանկյունից:

Նա գոհունակություն արտահայտեց այն կապակցությամբ, որ ԵՄ-ն և Հայաստանը բարեհաջող եզրափակեցին համագործակցության շրջանակի ուսումնասիրությունները և համաձայնության եկան ապագա համագործակցության հավանական ուղղությունների շուրջ: Այն երկու կողմերին թույլ կտա սկսել բանակցությունները ԵՄ-Հայաստան նոր համապարփակ Համաձայնագրի շուրջ, համապատասխան բանակցային մանդատների հաստատումից հետո:

Հանձնակատարն ընդգծեց, որ ԵՄ-ն հաստատակամ է և պատրաստ շարունակելու համագործակցությունն այն բոլոր ուղղություններով, որոնք համատեղելի են

Հասցե՝ Ֆրիկի 21, 0002, Երևան, Հայաստան
Հեռ.՝ (374 10) 54 64 94, ֆաքս՝ (374 10) 54 64 95

Delegation-Armenia@eeas.europa.eu

http://eeas.europa.eu/delegations/armenia/index_en.htm

Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների հետ: ԵՄ-ն հեռատեսուրեն է տրամադրված և ձևավորում է ապագա համագործակցության լավատեսական օրկարգ: Սա համապատասխանորեն կարտացոլվի նոր հեռահար Համաձայնագրում, որի շուրջ բանակցությունները կմեկնարկեն շուտով:

ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ ասուլիսի ընթացքում, հանձնակատար Հասնն ասաց. «Ողջունում եմ Հայաստանի հետ Շարժունակության շուրջ գործընկերության իրականացման շոշափելի առաջընթացը: Այդ կապակցությամբ վերահաստատում եմ ԵՄ-ն հստակ պատրաստակամությունը ընդլայնելու քաղաքացիների տեղաշարժը ապահով և լավ կառավարելի պայմաններում, ինչը հանդիսանում է Արևելյան գործընկերության հիմնական նպատակը: Այնուամենայնիվ, վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի կայուն և լավ իրականացումը նախապայման է հանդիսանում վիզաների ազատականացման շուրջ բանակցություններ մեկնարկելու համար»:

Հանդիպումների ընթացքում Հանձնակատարն անդրադարձ կատարեց նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հեռանկարներին, ընգծելով, որ կարևոր է խստորեն պահպանել հրադարարի ռեժիմը, ներդնել զսպավածություն գործողությունների և հայտարարությունների մեջ և ձևավորել այնպիսի մթնոլորտ, որը կնպաստի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի առաջխաղացմանը: Նա ընգծեց, որ հակամարտության խաղաղ կարգավորումը շարունակում է մնալ առաջնահեթ կարևորության հարց ԵՄ-ն համար:

Բարեփոխումների ընթացքի առնչությամբ հանձնակատարը, ճանաչելով ձեռք բերված առաջընթացը, միաժամանակ ոգեկոչեց արագացնել դրանց իրականացումը առանձին ոլորտներում: Նա ընգծեց, որ Հայաստանը կարող է ապավինել ԵՄ աջակցության շարունակականությանը քաղաքական և սոցիալական բարեփոխումների իրականացման, վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի կատարման և մարդու իրավունքների և համընդհանուր ազատությունների պաշտպանության ոլորտի բարելավման գործում: Այդ տեսանկյունից, հանձնակատարն ընդգծեց, որ կարևոր է լավագույնս օգտվել ԵՄ-ն կողմից 2014-2017 թվականների համար տրամադրվող 140-170 միլիոն եվրոյի ֆինանսական աջակցությունից, որն ուղղված է մասնավոր հատվածի զարգացմանը, պետական կառավարման ոլորտի բարեփոխումներին և արդարադատության համակարգի բարեփոխումներին:

- https://ec.europa.eu/commission/2014-2019/hahn/announcements/eu-armenia-shaping-positive-agenda-future-co-operation_en
- http://ec.europa.eu/enlargement/news_corner/news/2015/03/20150319_en.htm